# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ՄԱՍԻՆ

«ՍԱՊԾ-18/04-1»

ք.Երևան «25» դեկտեմբերի 2018թ.

ՀՀ ԿԱ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, ի դեմս ղեկավար Գեորգի Ավետիսյանի, ով գործում է ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1730-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) և «Նարեկ» գիտահետազոտական փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրեն Սառա Դավթյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2019 թվականի ընթացքում ձեռքբերվելիք լաբորատոր փորձաքննության ծառայության տեսակները և գնացուցակը, 2019 թվականի ընթացքում ձեռքբերվելիք լաբորատոր փորձաքննության ծառայությունների իրականացման համար փորձարկման լաբորատորիաների մրցույթի հայտարարության և հրավերի տեքստերը չեն հաստատվել, ուստի անհրաժեշտ է 2017 թվականի դեկտեմբերի 25-ին կնքված փորձաքննության ծառայությունների մատուցման թիվ «ՍԱՊԾ-18/04» շրջանակային համաձայնագրի 7.1-րդ կետում շրջանակային համաձայնագրի գործողության ժամկետ սահմանել մինչև 2019 թվականի ընթացքում ձեռքբերվելիք լաբորատոր փորձաքննության ծառայությունների մատուցման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերի կնքումը:
2. Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:
3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից ակցեպտը ստանալու պահից:
4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

Պատվիրատու
ՀՀ ԿԱ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին
ք.Երևան,Կոմիտաս 49/2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900013404026
ՀՎՀՀ 00454227
Գեորգի Ավետիսյան

Կատարող
«Նարեկ» գիտահետազոտական ՓԲԸ
ք.Երևան, Գետառի 4
«Արդշինբանկ» ՓԲԸ Էրեբունի մ/ճ
ՀՀ 2472300013380999
ՀՎՀՀ 00403641
Սառա Դավթյան